ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Դ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սովետական ժողովրդի ստեղծագործական նախաձեռնությունը վճռական դեր է խաղում նոր, կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։ Լինելով հզոր և մասսայական շարժում, սոցիալիստական մրցությունը հանդիսացավ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման կարևոր մեթոդը։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարդացման երկրորդ հնգամյա պլանի կատարման և դերակատարման համար մղվող պայքարը առաջ բերեց մեր երկրի բանվոր դասակարդի և կոլտնտեսային գյուղացիության մասսայական աշխատանքային ակտիվություն և ստեղծագործական նախաձեռնություն։

Սովետական Միության ժողովուրդները, կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, հաջողությամբ կատարում էին երկրորդ հնգամյա պլանը։ Հնգամյակի առաջին տարիներին (1933—1934 թթ.) սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերվեցին զգալի նվաճումներ։ Արագ թափով լուծվում էր երկրորդ հնգամյակի տնտեսական հիմնական խնդիրը՝ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության երկրորդ հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու գործում իր ուրույն տեղն ունի ստախանովյան շարժումը։ Շարժումը սկիզբ առավ Դոնբասում։ 1935 թ. օգոստոսի 30-ին Կադիևկայի շրջանի «Ցենտրալնոյե Իրմինո» հանքի հորատող Ալեքսանդր Ստախանովը ածխահատ կտրիչ մուրճով մեկ հերթափոխում (6 ժամում) տվեց 102 տոննա ածուխ։ Դա մոտավորապես այնքան էր, որքան 1933 թ. արդյունահանում էր հորատող բանվորը մեկ ամսում։ Այսպիսով, Ա. Ստախանովը ածխի հանույթի սովորական նորման գերազանցեց ավելի քան 14 անգամ։

Միլիոնավոր աշխատավորների հույզերի ու գործերի միասնականությամբ Կադիևկայում բռնկված նախաձեռնության կայծերը, կարճ ժամանակամիջոցում, մեր երկրի արդյունաբերության մեջ, երկաթուղային տրանսպորտում և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում վերածվեցին բանվոր դասակարգի հզոր շարժման։

Նորարարական շարժումը աշխատանքի կազմակերպման բնագավառում առաջ բերեց արմատական բեկում, բացահայտելով այն հսկայական հնարավորությունները, որ գոյություն ունեին սոցիալիստական արտադրության բնագավառում, աշխատանքի արտադրողականության աճի համար։ Այդ շարժումը մերժում էր հին նորմաները և ստեղծում նոր արտադրա-տեխնիկական նորմաներ, որոնք համապատասխանում էին տնտեսության զարդացման տվյալ էտապին։

Աշխատանքի ասպարեզում ստախանովականներն իրենց դրսևորեցին որպես հմուտ մասնագետ վարպետներ, ճշտապահ, օրինակելի և պարտաճանաչ աշխատողներ, որոնք դիտեին, ըստ ամենայնի, դնահատել ժամանակի դործո-

նը՝ դրսևորելով իրենց որպես սոցիալիզմի դարաշրջանին արժանի կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակի բանվորներ։

Նորարարական շարժումը մեծ ոգևորությամբ ընդունվեց նաև Հայկական ՍՍՀ-ի աշխատավորության կողմից, որի առաջին տարածողները Ալավերդու պղնձի կոմբինատի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողներն էին։ 1935 թ. հոկտեմբերի 15-ին կոմբինատի կուսակցական կոմիտեի նախաձեռնությամբ հրավիրվեց հանքերի, գործարանների, արտադրամասերի, բրիգադների հարվածային բանվորների հավաք։ Որոշում ընդունվեց աշխատանքի ստախանովյան մեթոդներին անցնելու մասին։ Հավաքը կոմբինատի կոմունիստներին կոչ արեց գլխավորել այդ շարժումը։

Լենինյան հանքերի չորս բրիգադների բանվորները սիստեմատիկաբար սկսեցին գերակատարել իրենց օրվա առաջադրանքները։ Հորատող, կոմունիստ Արշակ Ադամյանը, անցնելով ստախանովյան աշխատանքի, կրճատեց բրիգադի անդամների թիվը և տվեց 16,03 մ³ արտադրանք, պլանը կատարելով 233 տոկոսով[1]։ Նրա օրինակին հետևեցին Վ. Անանովը, Ալի Աբդուլլան, Ս. Խաչատրյանը, Բախշալի Բաբան, Ռիզա Նաբին և ուրիշները։

Հոկտեմբերի 30-ին Լենինյան հանքերի կուսակցական կոմիտեն հրավիրեց արտադրական կոնֆերանս, որտեղ ամփոփվեցին արտադրության նորարարների շարժման առաջին արդյունքները և որոշվեց այն ավելի մասսայական դարձնել։ Նոյեմբերի 1-ից հանքի բոլոր բրիգադները մտան նորարարական շարժման մեջ։ Արդյունքը եղավ այն, որ Լենինյան հանքերում աշխատանքի արտադրողականությունը, համեմատած նախորդ սեպտեմբեր ամսվա հետ, աճեց 16 տոկոսով, իսկ հանքաքարի հանույթի պլանը կատարվեց 160 տոկոսով[2]։ Ստախանովյան շարժման սկզբում՝ հոկտեմբեր ամսին 330 բանվորից ստախանովական էին 18-ը, նոյեմբերին՝ 43-ը, իսկ դեկտեմբերին՝ 73-ը[3]։

Ստախանովյան աշխատանքի առաջին փորձերը կիրառվեցին վատերժակետային 4-րդ վառարանի աշխատանքում։ Մինչև 1935 թ. հոկտեմբերի 23-ը այդ վառարանը պարբերաբար թերակատարում էր իր արտադրական պլանը։ Նորարարական մեթոդին անցնելուց հետո՝ հոկտեմբերի 24-ին պլանը կատարվեց 155 տոկոսով, հոկտեմբերի 25-ին՝ 135, հոկտեմբերի 26-ին՝ 145[4]։ Իսկ առանձին ստախանովականներ իրենց պլանները կատարում էին մինչև 205 տոկոսով. օրինակ, Ա. Աղեկյանը՝ 160, Ա. Վերանյանը՝ 206, Ս. Ղազարյանը՝ 200, կուսակցության անդամության թեկնածու Հ. Ջադինյանը՝ 200 տոկոսով և այլն։

Հոկտեմբերի 9-ին Ալավերդու պղնձաձուլական գործարանի կուսակցական կազմակերպությունը և դիրեկցիան հատուկ կոչով դիմեցին գործարանի բոլոր բանվորներին ու ինժեներա-տեխնիկական աշխատողներին՝ առաջարկելով լայնորեն արձագանքել ստախանովյան շարժմանը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

Հոկտեմբերի 28-ին նորարարական շարժումը տարածվեց նաև Ղափանի պղնձի կոմբինատում։ Այստեղ հրավիրվեց կոմբինատի կուսակցական կազմակերպության կոմիտեի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին հարվա-

---

1 Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 169, թ. 81։
2 Նույն տեղում, գ. 172, թ. 6։
3 Նույն տեղում, գ. 169, թ. 83։
4 Նույն տեղում, թ. 84։

ծային շատ բանվորներ ու ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ Որոշում ընդունվեց աշխատանքի ստախանովյան մեթոդներին անցնելու մասին[5]։ Միաժամանակ մանրամասն քննության առնվեց այն հարցը, թե ինչն է խանդարում հորատողներին ավելի բարձր արտադրողականության հասնելու համար։

Ինչպես Ալավերդում, այնպես էլ Ղավանում ստախանովյան շարժման նախաձեռնողները կոմունիստներն էին։ Զուլող բանվորներ Մ. Պապյանը, Հ. Հարությունյանը, Ք. Ավագյանը, Լ. Ալեքսանյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Ավթանդիլյանը և շատ ուրիշներ օրական կատարում էին կրկնակի արտադրական նորմա[6]։ Նրանք ոչ միայն պրոպագանդում էին իրենց աշխատանքի առաջավոր մեթոդները, այլև անձնական օրինակով ոգևորում անկուսակցական բանվորներին։

1935 թ. հոկտեմբերի կեսերին նորարարական շարժում է սկսվում Արթիկ-տուֆի և Անի-պեմզայի ձեռնարկություններում։ Հոկտեմբերի 9-ին շրջանային կուսակցական կոմիտեի ցուցումներով Արթիկի և Անիի հանքերում, արտադրամասերում և բրիգադներում հրավիրվում են արտադրական խորհրդակցություններ, ժողովներ ու հավաքներ, որտեղ լսվում են զեկուցումներ նորարարական շարժման դերի ու նշանակության, ինչպես նաև առաջավորների փորձը տեղերում կիրառելու հնարավորությունների մասին։ Որոշվում է, աշխատատար պրոցեսները ռացիոնալիզացնելու նպատակով, կատարել բանվորական ուժի բաշխում ըստ աշխատամասերի, ավարտել մեքենաների ու սարքավորումների վերանորոգումը, բոլոր բանվորներին պատասխանատու դարձնել իրենց ամրացված մեքենաների ու գործիքների համար և դրանք լրիվ օգտագործել արտադրության մեջ։ Այս-բոլորի հետևանքով, 1935 թ. հոկտեմբերի երկրորդ կեսից, Անի-պեմզայի և Արթիկ-տուֆի հանքերի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները սկսում են կիրառել ստախանովյան աշխատանքի մեթոդները։ Անի-պեմզայի հարվածայիններ Ս. Մելքոնյանը, Կ. Գասպարյանը, Ա. Հարությունյանը, Մ. Խաչատրյանը, պլանով նախատեսված 12 մ³ հանքաքարի փոխարեն սկսեցին կտրել 23—25 մ³։ Արթիկի քարհատներ Հ. Կյուրեղյանը, Գ. Նահապետյանը, Ա. Բաբայանը, Մ. Տոնականյանը, Ս. Վարդանյանը օրվա առաջադրանքը կատարում էին 150—180 տոկոսով։

Նորարարական աշխատանքի մեթոդները կիրառելու ուղղությամբ բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ մասսայական-կազմակերպական լայն աշխատանք էին կատարում Քանաքեռշինի կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները։ Շինարարության կուսակցական կոմիտեն հանձնարարում է կուսակցական ու հասարակական կազմակերպություններին, շինարարության տեղամասերի ղեկավարների հետ միասին, բոլոր արտադրամասային ու բրիգադային արտադրական խորհրդակցություններում բանվորներին մանրամասն ծանոթացնել Ալ. Ստախանովի մեթոդի հետ։

Քանաքեռշինի 4-րդ շինարարական հրապարակում աշխատող կոմունիստ Բաբկեն Հովսեփյանի բրիգադը սկսեց աշխատել ստախանովաբար։ Հրապարակի պետ ինժեներ Գ. Աղաբարովը և բրիգադիր Բ. Հովսեփյանը աշխատանքի նոր բաժանում և բանվորների վերադասավորում կատարեցին։ Եթե առաջ

5 Նույն տեղում, թ. 91։
6 Նույն տեղում, թ. 93։

51 հոգուց բաղկացած բրիգադը 24 ժամվա ընթացքում պատրաստում էր մոտ 5 մ³ բետոն. աշխատանքի նոր ձևին անցնելուց հետո 39 հոգով 18 ժամում պատրաստեցին 170 մ³ ծավալով ճնշիչ ավազանի բետոնապատ պատնեշ։ Ռացիոնալ ձևով աշխատելու շնորհիվ բետոնախառնիչ մեքենայի աշխատանքի գործակիցը 200-ից բարձրացավ 450—500-ի[7]։

Արդեն հոկտեմբերի վերջին ստախանովյան շարժման մեջ էր մտել Քանաքեռշինի 117 բրիգադ[8]։

Հայաստանի թեթև արդյունաբերության ձեռնարկություններում ստախանովյան շարժման առաջին նախաձեռնողները Լենինականի մանվածքային-գործվածքային կոմբինատի բանվոր-ծառայողներն էին։ Նորարարական շարժումն այստեղ սկսվեց հոկտեմբերի 20-ին։

Մանվածքային ֆաբրիկայի կուսակցական-տեխնիկական կոնֆերանսը Վինոգրադովաների մեթոդը արմատավորելու և տարածելու համար որոշեց վճռական միջոցներ կիրառել մեքենաների տեխնիկական վիճակը բարելավելու, տեխնիկական ղեկավարությունն ուժեղացնելու, մեքենաների ու սարքավորումների պարապուրդները հիմնովին վերացնելու, աշխատանքի կարգապահությունը բարձրացնելու ուղղությամբ[9]։

Կենսադրծելով կուսակցական-արտադրական կոնֆերանսի որոշումները՝ ֆաբրիկայի կուսակցական և հասարակական կազմակերպությունները գլխավորեցին ստախանովյան-վինոդրադովյան շարժումը, որի շնորհիվ պլանների կատարման տոկոսը օրեցօր ավելացավ՝ հոկտեմբերի վերջին անցնելով 100-ից[10]։

«Իդեալ» մեքենայի վրա աշխատող 25 բանվորուհիներ նախկին 2-ի փոխարեն սկսեցին աշխատել 3-ական մեքենայի վրա, իսկ վինոդրադովականներ Ս. Ավետիսյանը, Շ. Ծառուկյանը, Ռ. Հաբությունյանը աշխատանքի անցան 4-ական մեքենայի վրա։ Սկսած հոկտեմբերի 22-ից նրանցից յուրաքանչյուրը, օրական 18,8 տասնյակի փոխարեն, արտադրում էր 21—35,5 տասնյակ զույգ գուլպա[11]։

Միության թեթև արդյունաբերության առաջավոր գործարանների ստախանովականների աշխատանքը լայն կիրառում գտավ նաև Երևանի պահածոների գործարանում։ Բանջարեղենի արտադրամասի կաթսայավար Գրունյա Գուշկարյովան հմտորեն ու ռացիոնալ կազմակերպելով իր գործը, սկսեց կատարել երկու մարդու աշխատանք, օրական 6 կաթսայի փոխարեն տալով 12 կաթսա արտադրանք։ Տուփերը փակող մեքենայի վրա աշխատող Մ. Խաչարյանը օրվա պլանը կատարում էր 195—200 տոկոսով, պլանով առաջադրված 15 հազար պայմանական տուփի փոխարեն փակելով 27—30 հազար տուփ։ Իսկ Ա. Մարգարյանը և Շ. Վարդանյանը 350 կգ բանջարեղենի փոխարեն մանրացնում էին՝ 730—750 կգ[12]։

---

7 «Խորհրդային Հայաստան», 1935, հոկտեմբերի 22։

8 ՄԷԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 172, էջ 102։

9 Փ. Ի. Ե ն գ ո յ ա ն, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայի ինդուստրացման համար, Երևան, 1965, էջ 176։

10 ՄԷԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 159, էջ 79։

11 «Խորհրդային Հայաստան», 1935, հոկտեմբերի 24։

12 Նույն տեղում, հոկտեմբերի 29։

Շուտով ստախանովյան շարժմանն արձագանքեցին Երևանի մեխանիկական, կտրի, ծխախոտի, կաշվի, հրուշակեղենի, կարբիդի, Լենինականի մեխանիկական ու կարի գործարանների, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի, ինչպես նաև հանրապետության արտելների բանվործառայողները։

Ստախանովյան շարժման ծավալման գործում վճռական դերը պատկանում էր կոմունիստական կուսակցությանը, որը մեծ ուշադրություն էր դարձնում նոր մեթոդների կիրառմանը և արտադրության մեջ նրա հետագա զարգացմանը։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1935 թ. նոյեմբերի 14—17-ը Մոսկվայում հրավիրեց ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցություն, որին մասնակցում էին արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բոլոր ճյուղերի ավելի քան 3000 առաջավորներ։

Խորհրդակցությունը մեծ դեր խաղաց նորարարական շարժման հետագա ծավալման գործում։ Այդ շարժման վերելքը և մասսայականությունը կախված էր նրանից, թե կոմունիստները որքանով կկարողանան ճիշտ ուղղություն ցույց տալ, ղեկավարել և ժամանակին բացահայտել նկատվող թերությունները։ Խորհրդակցությունը պահանջեց ուժեղացնել ստախանովյան շարժման ղեկավարությունը և նրա զարգացմանն ու ծավալմանը ցույց տալ ամենօրյա օգնություն։

Ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությունից հետո, 1935 թ. նոյեմբերին, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն որոշում ընդունեց «Ստախանովյան շարժման ղեկավարման մասին»։ Այնտեղ նշվում էր, որ արտադրության նորարարների շարժումը լայնորեն արմատավորվում է նաև մեր հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում և տրանսպորտում։ Կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների խնդիրն է ամենակարճ ժամկետում ստախանովյան շարժումը դարձնել լայն մասսաների շարժում, տնտեսական մարմինների հետ միասին միլիոնների սոցիալիստական մրցությունը բարձրացնել մի նոր, ավելի բարձր աստիճանի։ Արտադրության նորարարների շարժումը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր հարվածային-գերազանցիկ ձգտի դառնալ ստախանովական։ Պետք է լայն կերպով ցուցադրել ստախանովականների ու առաջավոր բանվորների աշխատանքի փորձն ու մեթոդները։

Կենտկոմը հանձնարարեց ՀԱՄԽ-ին հատուկ ուշադրությամբ և բազմակողմանի հոգատարությամբ շրջապատել յուրաքանչյուր ստախանովականի, նյութական-կենցաղային և կուլտուրական լավագույն պայմաններ ստեղծել արտադրության նորարարների ու նրանց ընտանիքների համար[13]։

Կուսակցության քաղաքային ու շրջանային կոմիտեները, ելնելով այդ որոշումից, հանձնարարեցին արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական օբյեկտների, երկաթուղային տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառների կուսակցական, տնտեսական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպություններին գլխավորել այդ շարժումը և ամեն կերպ աջակցել նրա ծավալմանը արտադրամասերում, հանքերում,

13 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 17, ց. 1, գ. 757, թ. 2—3։

բրիգադներում, հերթափոխներում և ամենուրեք։ Բանվորների ընդհանուր ժողովները, ստախանովականների զեկույցները, արտադրության նորարարների հավաքները, միտինգները, խորհրդակցությունները, դրույցները և աշխատանքի մյուս ձևերը, որոնք տեղի էին ունենում ձեռնարկություններում, խթանում էին հանրապետությունում ստախանովյան շարժման հետագա տարածմանը։

Ղափանի հանքերի, ձուլարանի և հարստացուցիչ գործարանի ստախանովականների հավաքը, որ տեղի ունեցավ 1935 թ. նոյեմբերի 19-ին, ամփոփեց արտադրության նորարարների միութենական հավաքի արդյունքները։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանին ու «Խորհրդային Հայաստանի» խմբագրությանն ուղղած իրենց հեռագրերում հավաքի մասնակիցները պատմում էին այն նվաճումների մասին, որ ձեռք էին բերել Ղափանի նորարարները՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում։ Լենինյան հանքի հորատող բանվոր, ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցության մասնակից Մինաս Պապյանը և Արտեմ Ավթանդիլյանը օրական հորատում էին 10 մ³, իրենց արտադրական պլանները կատարելով 300 տոկոսով։ Նրանք օրական 80 և ավելի ռուբլի աշխատավարձ էին ստանում[14]։

Նոյեմբերի 21-ին Քանաքեռշինի 4-րդ շինարարական հրապարակի դահլիճում հրավիրվեց շինարարության ստախանովականների հավաք։ 1935 թ. երեք եռամսյակներում կատարած աշխատանքների, առաջիկա անելիքների ու ստախանովյան շարժման հետագա ծավալման մասին հավաքին պատմեց շինարարության պետ Ի. Ա. Տեր-Աստվածատրյանը. «...Ստախանովյան շարժման հետևանքով,— ասաց նա,— մեր շինարարության տարեկան պլանը կկատարվի ժամկետից շուտ։ Չնայած այդ նվաճումներին, մենք դեռ խիստ ետ ենք մնում մի շարք կարևորագույն ցուցանիշների, հատկապես աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման գծով... Այն հանգամանքը, որ ստախանովականները ստեղծագործական տիպի մարդիկ են, մեզ վստահություն է ներշնչում, որ այդ շարժումը զարգանալու և աճելու է։ Բոլոր տեղամասերի համար, որպես ընդհանուր թերություն, անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ ստախանովյան աշխատանքի մեթոդները չեն ուսումնասիրվում, չեն վերլուծվում։ Մեր խնդիրն է խնամքով ուսումնասիրել աշխատանքի ստախանովյան մեթոդները, թափանցել այդ մեթոդների էության խորքը, ընդհանրացնել այդ առաջավոր փորձը, կազմակերպված կերպով տարածել այդ շարժումը բանվորական լայն մասսաների մեջ»[15]։

Ստախանովական Բ. Հովսեփյանը իր ելույթում ասաց. «...Աշխատանքի բարձր արտադրողականության համար պայքարող ստախանովյան շարժման հետևանքը կլինի 1935 թ. պլանի և 2-րդ հնգամյակի առաջադրանքների հաջող կատարումն ու դերակատարումը, մեր երկրի է՛լ ավելի ամրապնդումը, աշխատավորության բարեկեցության անշեղ վերելքը։ Սակայն մեզ մոտ դեռևս կան չօգտագործված հսկայական ռեսուրսներ ու հնարավորություններ։ Պետք է մրցությունը կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր հարվածային-դերաղանցիկ ձգտի դառնալ ստախանովական։ Իմ և ընկերներիս կարծիքով պետք է լայնորեն ցուցադրել ու տարածել ստախանովականների աշխատանքի փորձն ու մեթոդները... Հաստատակամ ամենօրյա աշխատանքով այդ փորձը ցեխից-

14 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935 թ. նոյեմբերի 22։
15 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 169, էջ 183։

ցեխ, շինարարությունից շինարարություն, բրիգադից բրիգադ տարածելու ուղղությամբ»[16]։

1935 թ. նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների ստախանովականների հավաք, որին ներկա էին մայրաքաղաքի 400-ից ավելի նորարարներ։ Հավաքը նշեց, որ Երևանի արդյունաբերական ձեռնարկություններն իրենց բոլոր ցուցանիշների անթերի կատարման տեսակետից պետք է հավասարվեն Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի ու Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքներ՝ Բաքվի ու Թբիլիսիի ձեռնարկություններին։ Մայրաքաղաքի յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկություն պետք է կարողանա աշխատանքը ռացիոնալ կազմակերպելու և ընդհանրապես տնտեսությունը կուլտուրականացնելու լավագույն օրինակներ տալ հանրապետության բազմաթիվ այլ ձեռնարկություններին»[17]։

1935 թ. նոյեմբերին Հայաստանի գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական օբյեկտներում և երկաթուղային տրանսպորտում տեղի ունեցան արտադրության առաջավորների հավաքներ։

Արտադրության նորարարների շարժման ծավալման գործում մեծ դեր խաղաց պարբերական մամուլը, որը ամենօրյա օգնություն էր ցույց տալիս հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրմանը։ Կենտրոնական և հանրապետական թերթերը, ֆաբրիկա-գործարանային բազմատիրաժները, արտադրամասային բյուլետենները, հերթափոխային թերթիկները, «կայծակները» պարբերաբար լուսաբանում էին սոցիալիստական մրցության ծավալման ընթացքը, ցույց տալիս կոմունիստների ու կոմերիտականների ավանգարդային դերը այդ շարժման մեջ։

Մեծ էր շրջանային և գործարանային բազմատիրաժ թերթերի դերը։ Նրանք փաստորեն ստախանովյան աշխատանքի փորձի հաղորդման ամբիոն էին։ Արտադրության նորարարների շարժման տարածման հարցերը կարևորագույն տեղ էին բռնում «Կաուչուկի համար», «Պայքար պղնձի համար», «Մանածագործ» բազմատիրաժների էջերում։ Այստեղ պարբերաբար հանդես էին գալիս ստախանովականներ, հարվածայիններ, որոնք մամուլի միջոցով աշխատանքի փորձի փոխանակում էին կատարում։ Ֆաբրիկա-գործարանային բազմատիրաժներն ու պատի թերթերը նորարարների ձեռքում հզոր զենք էին աշխատանքի բարձր արտադրողականության պրոպագանդման գործում։

Ստախանովականների համամիութենական առաջին խորհրդակցությունից և հանրապետությունում անցկացված հավաքներից ու խորհրդակցություններից հետո արտադրության նորարարների շարժումը երկրում, այդ թվում և Հայաստանում, լայն զարգացում ապրեց. խիստ բարձրացավ բանվորների աշխատանքի արտադրողականությունը, իջավ արտադրանքի ինքնարժեքը. ավելացավ արտադրության միջոցների խնայողությունը։ Ոչ միայն առանձին բանվորներ, այլև ամբողջ արտադրամասեր, բրիգադներ, սկսեցին օգտագործել աշխատանքի նոորարարական ձևերը։ Իսկ աշխատանքի բարձր արտադրողականության ապահովումը նպաստում էր բանվորների աշխատավարձի զգալի ավելացմանը։ Այդ բանը երևում է Ալավերդու կոմբինատի բանվորների աշխատանքի օրինակով։ Փականագործ Ա. Մայիլյանը, ըստ տարիֆի, ստանում էր

16 «Խորհրդային Հայաստան», 1935 թ. նոյեմբերի 23։

17 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 169, էջ 181։

203 ռ. աշխատավարձ։ Անցնելով աշխատանքի ստախանովյան մեթոդներին, նա նոյեմբերին ստացավ 245 ռ., իսկ դեկտեմբերին 453 ռ. 43 կ.։ Փականադորձ Ս. Ջավախիշվիլին նույնպես անցնելով ստախանովյան մեթոդների, նոյեմբերին ստացավ 211 ռ. 25 կ., դեկտեմբերին՝ 677 ռ. 91 կ., իրականում սրանց աշխատավարձը ավելացավ 230—330 տոկոսով։ Սեադորձ բանվոր Վ. Նազարյանը ստանում էր 101 ռ. 50 կ., նոյեմբերին ստացավ 120 ռ., իսկ դեկտեմբերին՝ 358 ռ. 20 կ., նրա աշխատավարձը ավելացավ 352,0 տոկոսով, հերթափոխային ինժեներ Ս. Մալացիտին ստանում էր 500 ռ., իսկ դեկտեմբերին ստացավ 879 ռ. 90 կ.[18]։

1935 թ. վերջին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում ավելացավ ստախանովականների թիվը։ Նկատելի է, որ արտադրության առաջավորների շարժումը ընդլայնվում է առանձնապես արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում։ Այսպես, եթե հոկտեմբերին Երևանի կարի ֆաբրիկայում կար ընդամենը 44 ստախանովական, դեկտեմբերին նրանց թիվը հասավ 274-ի, Լենինականի կարի ֆաբրիկայում համապատասխանաբար՝ 37-ից 118-ի, Լենինականի դուլպայի ֆաբրիկայում՝ 117-ից 344-ի և այլն[19]։

Աշխատանքի բարձր արտադրողականության ապահովման համար մեծ նշանակություն ունեցավ բանվորների նորարարական առաջարկությունների յուրացումը, ինչպես նաև մեկից ավելի հաստոցների ու մեքենաների սպասարկման անցնելը։

Ֆաբրիկայի առաջին ստախանովականը կոմունիստ Ա. Իսկանդարյանն էր։ Օպերացիաների վերաբաշխման հետևանքով նա պլանները կատարում էր 200 տոկոսով։ Սկզբում նա կատարում էր մեկ օպերացիա, իսկ հետո անցավ երկուսին։ Ա. Իսկանդարյանի նման էին աշխատում Ս. Պետիկյանը, Վ. Փիլոյանը, Վ. Մարկոսյանը, Ա. Բաբայանը, Ե. Ջուբախանյանը և ուրիշներ։

Ժողովրդական տնտեսության վճռական տեղամասերում կոմունիստները ընթանում էին նորարարների առաջին շարքերում, իրենց օրինակով դաստիարակելով կոմերիտականներին ու կուսակցականներին։ Այսպես, օրինակ, Ղափանի պղնձահանքերի հորատող բանվոր, ՀամԿ(բ)Կ անդամ Մինաս Պապյանը 1935 թ. դեկտեմբերի վերջերին կատարում էր հավաքովի հանույթի 6 նորմա։

Կաուչուկշինի Բ. Թադևոսյանի բրիգադը ստախանովական աշխատանքի շնորհիվ ձեռք բերեց խոշոր նվաճումներ։ Յուրաքանչյուր բետոնադորձ օրական 9 մ³ բուտո-բետոնի փոխարեն տալիս էր 17 մ³ (195 տոկոս) արտադրանք։

Այսպիսով, նորագույն տեխնիկայի մաքսիմում օգտագործման համար մղվող պայքարում ստախանովականները պարբերաբար նորություններ էին մտցնում իրենց աշխատանքի մեջ, սովորում էին խնայել աշխատանքի ժամանակը, հասնելով արտադրական նորմաների զգալի դերակատարմանը։

Արտադրության նորարարների շարժման շնորհիվ երկրորդ հնգամյակի երրորդ տարվա պլանը Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները կատարեցին ու գերակատարեցին։ Այսպես, օրինակ, Ալավերդու պղնձաձուլարանը 1935 թ. պլանը կատարեց 100,1 տոկոսով, Ղափանի պղնձաձուլարանը՝ 115,4, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը՝ 107,1, Լենինականի տեքստիլ մանարանը՝ 100,7, Երևանի պահածոների գործարանը՝

18 Նույն տեղում, էջ 104—105։
19 Նույն տեղում, գ. 172, թ. 158։

105,2, Լենինականի մսի կոմբինատը՝ 113,7, Երևանի կաշվի՝ գործարանը՝ 125,7, «Արարատ» տրեստի կոնյակի գործարանը՝ 121,4 տոկոսով և այլն[20]։

Ստախանովյան շարժումը սկզբնական շրջանում ծավալվում էր անհամաչափ, այսինքն՝ միայն կարևոր ճյուղերում։ Կային սխալներ աշխատանքի կազմակերպման գործում։ Պատահում էր նույնիսկ, որ միևնույն ձեռնարկությունում աշխատանքի ստախանովյան մեթոդները կիրառվում էին միայն կարևոր նշանակություն ունեցող արտադրամասերում ու տեղամասերում։ Այսպիսի վիճակը խանգարում էր ստախանովյան շարժման տարածմանը։

Խնդիրն այն էր, որ արտադրության նորարարների շարժումը անհրաժեշտ էր ծավալել բանվորական բոլոր խմբերում, արտադրության բոլոր օղակներում, տեղամասերում։ Այդ գործում վճռական դեր խաղաց 1935 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, որը քննարկեց արդյունաբերության և տրանսպորտի հարցերը՝ կապված ստախանովյան շարժման հետ։

НОВАТОРСКОЕ ДВИЖЕНИЕ В ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ В ГОДЫ ВТОРОЙ ПЯТИЛЕТКИ

Г. Г. МУРАДЯН

Резюме

В статье рассматриваются вопросы возникновения и развития движения новаторов в годы второй пятилетки. Освещаются обстоятельства, которые способствовали его возникновению в промышленности Армении; обосновываются причины, приведшие к его зарождению сначала в горнорудной, а затем и в других отраслях промышленности республики. На конкретных примерах раскрывается работа новаторов различных предприятий.

Автор рассказывает о большой работе, проделанной для пропаганды и популяризации новаторских методов труда партийными организациями.

20 Նույն տեղում, ֆ. 23, ց. 172, թ. 34